Հարգելի՛ Ընթերցող,

Ուրախ ենք ողջունել քեզ **«Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդեսի»** (ԱԲՀՀ) անդրանիկ համարի էջերին: Հանդեսի նպատակն է դառնալ հայաստանյան առողջապահական և բժշկագիտական իրողության հայելին: Այն նախատեսում է խթանել բժշկական գիտական աշխատանքների տպագրության ակտիվությունը ԱԱԻ ամբիոնների շրջանում, ընդհանրապես Հայաստանում, ինչպես նաև կծառայի միջազգային գիտական աշխատանքների արդյունքներն արտացոլելու համար: Ներկայումս այն նախատեսված է որպես գրախոսվող եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) պարբերական:

Հանդեսի հեռակա նպատակները շատ են, և դրանցից ամենակարևորը՝ դառնալ միջազգային ճանաչված գիտաբժշկական հանդես: Մենք շատ լավ գիտակցում ենք, թե ինչ դժվար ուղի ենք ընտրել և ինչպիսի բարձր նշաձող դրել, սակայն, ձգտելով գիտական հոդվածների հրատարակման բարձր ստանդարտի, վստահ ենք, որ կարևոր ու խիստ անհրաժեշտ գործ ենք անում մեր Հայրենիքի համար: Նախատեսվում է հոդվածների շրջանառության առցանց համակարգի կիրառում և անաչառ գրախոսության բարձր մշակույթի ներարկում մեր բժշկագիտական դաշտ: Հոդվածները կստանան DOI կոդավորում և ինտենսիվ աշխատանք կտարվի ինդեքսավորման տարբեր հարթակներում ԱԲՀՀ ներկայությունն ապահովելու ուղղությամբ:

Հանդեսում նախատեսվում է տպագրել ամենատարբեր տեսակի հոդվածներ՝ գրականության ակնարկներ, օրիգինալ գիտական աշխատանքներ, կարճ հոդվածներ, կլինիկական դեպքերի նկարագրություններ, խմբագրականներ, ուղեցույցներ, կարծիքներ և այլն: Ինչպես հուշում է հանդեսի անվանումը, ԱԲՀՀ հիմնական ուղղվածությունները են կլինիկական բժշկությունը և առողջապահությունը: Պատրաստ ենք տպագրել նաև փորձարարական գիտական աշխատանքներ, եթե դրանք հանդիսանում են տրանսլյացիոն գիտության օրինակներ և ունեն անմիջական նշանակություն կլինիկական գիտության համար:

Աշխատանքներ են տարվում միջազգային ներկայացուցչական խմբագրակազմ և գրախոսներ ունենալու համար: Ուրախ ենք համագործակցել առաջատար հայաստանյան և արտասահմանյան մասնագետների հետ: Միաժամանակ հրավիրում ենք բոլոր նրանց, ովքեր իրենց մասնագիտական դաշտերում ունեն տպագրությունների և գրախոսությունների փորձ, որպեսզի օգնեն մեզ ապահովելու ստացվող հոդվածների բարձրորակ գրախոսություն:

Ապագա հեղինակներին տեղեկացնում ենք, որ հոդվածները կանցնեն պատշաճ գրախոսություն, ինչը կնպաստի նյութի ավելի լիարժեք ներկայացմանը և քննարկմանը, ինչպես նաև ԱԲՀՀ էջերում տեղ գտնող աշխատանքների ընդհանուր բարձր որակին:

Ինչ վերաբերում է հանդեսի առաջին համարին, ապա այստեղ հավաքվել է բավականին հետաքրքիր հոդվածների մի բույլ, որոնք հակիրճ կամփոփենք ստորև:

Հաշվի առնելով COVID-19 համավարակի համաշխարհային և տեղական չպակասող հրատապությունը՝ ընթերցողը՝ Հ.Միլիտոնյանի և համահեղինակների գրականության ակնարկի շնորհիվ հնարավորություն ունի ծանոթանալ COVID-19 համավարակի դեմ Հայաստանում առկա պատվաստանյութերին: Պրոֆ. Է.Համբարձումյանը ներկայացնում է ժողովրդագրության հարցում շատ կարևոր վերարտադրողական ասպեկտի վերաբերյալ Հայաստանում ծառացած խնդիրները, իրավական խոչընդոտները՝ դրանք հաջողությամբ համեմատելով միջազգային փորձի հետ:

Սույն համարում տեղ է գտել նաև Ս.Խաչատրյանի և տեղացի ու առաջատար արտասահմանցի համահեղինակների կողմից ներկայացված մի կարևոր հոդված՝ նվիրված Հայաստանում քնի բժշկության առկա խնդիրներին և դրանց ապագա լուծումներին ու զարգացումներին: Այն հանդիսանում է դիրքորոշում հաստատող հոդված, որն 2019թ. Հայաստանում անցկացված միջազգային կլոր-սեղան քննարկման ամփոփումն է և կարևոր ուղեցույց կծառայի Հայաստանում քնի բժշկության հետագա զարգացման հարցում:

DOI:10.54235/27382737-2021.1.1-10. Published online: 21 September 2021

Մենք միտված ենք լինելու ապագայում ևս հանդեսի ընթերցողին ներկայացնել ուղեցույցներ և նմանատիպ հոդվածներ, որոնք ուղղված են Հայաստանում տարբեր բժշկական և առողջապահական ոլորտների զարգացմանը, կազմակերպմանը և ստանդարտացմանը:

Ա.Հովսեփյանի հոդվածը վերաբերում է իրենց հետազոտական խմբի մի հետաքրքիր ուսումնասիրությանը, որով ցույց են տալիս, որ նույնիսկ համավարակի օրոք կարելի է հասնել կպչուն-սևեռուն խանգարման ուղեկից աղտոտման վախի բարելավման: Տ.Աստվածատրյանը և համահեղինակները ներկայացրել են իրենց կլինիկայում տակոցուբո կարդիոմիոպաթիայի առաջին անգամ հանդիպած եզակի կլինիկական դեպքը: Կարդալով բուն հոդվածը՝ կիմանաք նաև, թե ինչ է նշանակում այդ յուրօրինակ ճապոնական բառը:

Իրենց կլինիկական փորձի ամփոփմամբ հանդես են գալիս վիրաբույժները: Մասնավորապես, Հ.Ենոքյանը կիսվում է ռինոպլաստիկայում պյեզովիրաբուժության կիրառման հնարավորությունների սեփական փորձով, իսկ Կ.Պետրոսյանը և համահեղինակները ներակայացնում են վերջույթների և քթի դեֆորմացիաների շտկման յուրահատուկ կլինիկական դեպքեր:

Նշենք, որ հանդեսում նախատեսել ենք հատուկ բաժին՝ նվիրված հայաստանյան բժշկագիտության պատմական և մշակութային ասպեկտներին: Այդ ավանդույթին սկիզբ է դնում այս համարում վերատպագրված՝ ԱԱԻ հիմնադիր, ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի հեղինակած հոդվածը, նվիրված կարդիոսպազմի ժամանակ էզոֆագոֆունդոանաստոմոզի վիրահատության բարդություններին: Նշենք, որ այն վերցված է ԱԱԻ կամ այն ժամանակ Բժիշկների վերապատրաստման պետական ինստիտուտի աշխատանքների հանդեսի 1965թ. լույս տեսած անդրանիկ համարից: Խորապես համոզված ենք, որ հիշելով և գնահատելով մեր մեծերին, մեր անցյալն ու պատմական փաստերը՝ ավելի լավ կկարողանանք արժևորել ներկան և նախանշել ապագային միտված քայլերը:

Հավատացած ենք, որ այս նախաձեռնությունը կունենա մեծ ապագա և կխթանի հայաստանյան բժշկագիտության կոնսոլիդացիան ու զարգացումը: Մաղթում ենք հաճելի և օգտավետ ընթերցում:

Դավիթ Աբրահամյան
ԱԲՀՀ գլխավոր համախմբագիր

Սամսոն Խաչատրյան
ԱԲՀՀ գլխավոր համախմբագիր